ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«28» փետրվար 2020թ. No 790 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՎԱՐԱԿՈՎ (2019Թ.N-COV) ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԿԱՍԿԱԾԻ ԴԵՊՔՈՒՄ ՊԱՑԻԵՆՏՆԵՐԻ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ՃՇՏՄԱՆ ԵՎ ԲՈՒԺՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի առաջին կետը, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 2-րդ գլխի 11-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշման հավելվածով հաստատված առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը, առողջապահության համաշխարհային կազմակերպության առաջարկությունները՝ Հայաստանի Հանրապետությունում նոր կորոնավիրուսային վարակի (2019թ.n-CoV) դեմ պայքարի միջոցառումներն իրականացնելու նպատակով.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետությունում նոր կորոնավիրուսային վարակի (2019 թ.n-CoV) կասկածի դեպքում հիվանդանոցներում արտահիվանդանոցային պայմաններում և շուրջօրյա բժշկական օգնություն պահանջող հոսպիտալացված անձանց ախտորոշման ճշտումը և բուժումը իրականացվում է պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում՝ անկախ նրանց սոցիալական կարգավիճակից և քաղաքացիությունից:

2. Նոր կորոնավիրուսային վարակի (2019թ.n-CoV) կասկածի դեպքում պետական պատվերով հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմամակերպությունների ղեկավարներին՝ հրամանի 1-ին կետով սահմանված դեպքերի հիվանդանոցային բժշկական օգնության կազմակերպման

ժամանակ առաջնորդվել առողջապահության նախարարի 2020 թվականի հունվարի 31 -թիվ N 336 - Ա հրամանի դրույթներով:

3. Սույն հրամանի 1-ին կետով սահմանված դեպքերը փոխհատուցել.

1) հիվանդանոցային պայմաններում ամբուլատոր բժշկական օգնության և սպասարկման դեպքը՝ 9000 դրամ,

2) հիվանդանոցային համաճարակաբանական դիտարկման, ախտորոշման ճշտման կամ շուրջօրյա հսկողություն պահանջող դեպքերի բժշկական օգնություն և սպասարկում՝ մեկ օրը 15,000 դրամ, առավելագույնը՝ 150,000 դրամ:

4. Առողջապահության նախարարության աշխատակազմի պետական առողջապահական գործակալության պետ Ծաղիկ Վարդանյանին՝

հիմք ընդունել սույն հրամանի 1-ին կետով սահմանված դրույթները պետական պատվեր իրականացնող հիվանդանոցային բժշկական կազմակերպությունների կողմից ներկայացված հաշվետվությունների ընդունման ընթացքում իրականացնել դեպքերի փոխհատուցում:

5. Առողջապահության նախարարության քարտուղարության պետ Զարուհի Դարբինյանին՝ ապահովել պետական պատվեր իրականացնող բժշկական կազմակերպությունների իրազեկումը սույն հրամանի մասին:

6. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝ ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքէջում:

7. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել առողջապահության նախարարի տեղակալ Արտյոմ Սմբատյանին:

8. Սույն հրամանի դրույթները տարածվում են 2020 թվականի փետրվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ